ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 9, 1951 Общественные науки

Գ. Սահակյան

ՀՈՅԱԿԱՊ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության Պետական պլանային հանձնաժողովի և Կենտրոնական Վիճակագրական Վարչության հաղորդումը 1946—1950 թթ. ստալինյան չորրորդ (հետպատերազմյան առաջին) հնգամյա պլանի կատարման արդյունքների մասին մի անգամ ևս համոզիչ կերպով ցույց տվեց սոցիալիզմի մեծագույն առավելությունը կապիտալիզմի նկատմամբ։ Հետպատերազմյան ստալինյան հնգամյակի արդյունքների մեջ մարմնավորված է սովետական ժողովրդի ստեղծագործական խաղաղ աշխատանքը, որն արտահայտում է սոցիալիստական մեծ տերության՝ Սովետական Միության ուժն ու հզորությունը։

Ի տարբերություն նախապատերազմյան հնգամյակների, հետպատերազմյան հնգամյակը սովետական ժողովրդի կողմից կատարվեց իր մասշտաբներով ու ավերածություններով պատմության մեջ աննախընթաց պատերազմից հետո, մի պատերազմ, որը մեր երկրի սոցիալիստական էկոնոմիկային հսկայական վնաս պատճառեց։

Ընկեր Ստալինը 1946 թվի փետրվարի 9-ին Մոսկվա քաղաքի Ստալինյան ընտրական օկրուգի նախընտրական ժողովում արտասանած պատմական ճառում սպառիչ կերպով առաջադրեց ինչպես հետպատերազմյան հնգամյակի, այնպես էլ հետագա ավելի երկարատև ժամանակաշրջանի զարգացման խնդիրները։

«Նոր հնգամյա պլանի հիմնական խնդիրներն են՝ վերականգնել երկրի տուժած շրջանները, վերականգնել արդյունաբերության և գյուղատնտեսության նախապատերազմյան մակարդակը և այնուհետև քիչ թե շատ զգալի չափով գերազանցել այդ մակարդակը։ Չխոսելով արդեն այն մասին, որ մոտիկ ժամանակներս վերացվելու է քարտային սիստեմը, հատուկ ուշադրություն պետք է նվիրվի լայն սպառման առարկաների արտադրության ընդլայնմանը, աշխատավորության կենսամակարդակի բարձրացմանը՝ բոլոր ապրանքների գները հետևողականորեն իջեցնելու միջոցով և ամեն տեսակ գիտա-հետազոտական ինստիտուտների լայն շինարարությանը, որոնք կարող են գիտությանը հնարավորություն տալ ծավալելու իր ուժերը»։[1]

Հետպատերազմյան հնգամյակի կատարման արդյունքները ցույց են տալիս, որ ստալինյան առաջադրանքները կատարված են լիովին և ժամկետից շուտ։ Այս փաստը ցույց տվեց, թե ինչպիսի հոյակապ սխրագործություններ կարող է կատարել սովետական հերոս ժողովուրդը, որին ղեկավարում են ժողովուրդների հանճարեղ առաջնորդ ընկեր Ստալինը, բոլշևիկների պարտիան։

---

[1] *Ընկեր Ի. Վ. Ստալինի ճառը Մոսկվա քաղաքի Ստալինյան ընտրական օկրուգի ընտրողների նախընտրական ժողովում, 1946 թ. փետրվարի 9-ին։ Հայպետհրատ, 1946 թ., էջ 19—20։*

Հետպատերազմյան հնգամյակը ժամկետից շուտ կատարվեց և գերակատարվեց բոլոր հիմնական գծերով։ Պլանով նախատեսված էր, որ ամբողջ արդյունաբերական արտադրանքը 1950 թվին՝ 1940 թվի համեմատությամբ պետք է տար 48 տոկոսի աճ, փաստորեն այդ աճը կազմեց 73 տոկոս։ Արդյունաբերական արտադրանքի հնգամյա պլանը կատարվեց ժամկետից շուտ, 4 տարի և 3 ամսում։

Ամենաարագ տեմպերով աճեց ծանր ինդուստրիան, որի առաջատար ճյուղերի պլանային առաջադրանքները գերակատարված են։ Այսպես, օրինակ՝ սև մետաղաձուլության արտադրանքը 1950 թվին 45 տոկոսով գերազանցեց նախապատերազմյան մակարդակը, պլանով նախատեսված 35 տոկոսի փոխարեն, ըստ որում նախապատերազմյան մակարդակի համեմատությամբ չուգունի ձուլումը աճեց 29 տոկոսով, պողպատինը՝ 49 տոկոսով, իսկ գլանվածքի արտադրանքը՝ 59 տոկոսով։ Հարավի մետաղաձուլական գործարանները, որ պատերազմի ընթացքում ամբողջովին ավերվել էին, ներկայումս վերականգնված են տեխնիկական նոր բազայի հիման վրա և ավելի շատ մետաղ են տալիս, քան պատերազմից առաջ։ Տեխնիկական նոր բազայի հիման վրա վերականգնված է Դոնբասի ածխարդյունաբերությունը, որի արտադրանքը ավելի շատ է, քան պատերազմից առաջ և գերազանցում է պլանային առաջադրանքները։ Մերձմոսկովյան ածխային ավազանը, որ լիովին ավերվել էր գերմանացիների կողմից, այժմ 3 անգամ ավելի շատ ածուխ է տալիս, քան պատերազմից առաջ։

Սոցիալիստական արդյունաբերության զարգացման կարևոր սկզբունքներից մեկը հանդիսանում է արտադրողական ուժերի ճիշտ տեղաբաշխումը, մեր երկրի բնական հարուստ ռեսուրսների մաքսիմալ օգտագործումը։

Այդ տեսակետից բնորոշ է սովետական Արևելքի և ազգային ռեսպուբլիկաների ինդուստրացման ստալինյան պլանը։

Հետպատերազմյան հնգամյակում ծանր ինդուստրիայի զարգացման տեմպերը ՍՍՌՄ արևելյան շրջաններում շատ ավելի բարձր են, քան ամբողջ Սովետական Միության մեջ։ Այսպես, օրինակ՝ չուգունի արտադրությունը Ուրալում 1950 թվին՝ 1940 թվի համեմատությամբ աճել է 2,6 անգամ, պողպատինը՝ 2,7 իսկ գլանվածքինը՝ 2,8 անգամ։ Նույնպիսի բարձր տեմպերով է իրականացվել նաև սովետական Արևելքի այլ շրջանների ազգային ռեսպուբլիկաների ինդուստրացումը։

Հետպատերազմյան հնգամյակում հաջողությամբ վերականգնվեցին և մեծ վերելք ապրեցին նաև ծանր ինդուստրիայի մյուս ճյուղերը — ածխարդյունաբերությունը, նավթարդյունաբերությունը, գունավոր մետաղաձուլությունը, մեքենաշինությունը և այլն։

Մեքենաշինությունը, որ ծանր ինդուստրիայի ամենահիմնական մասն է կազմում և հանդիսանում է ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի տեխնիկական հետագա սպառազինման բազան, հետպատերազմյան հնգամյակում հասավ խոշորագույն հաջողությունների։ Մեքենաշինության արտա-

---

1 Տես ՍՍՌՄ Պետական պլանային հանձնաժողովի և ՍՍՌՄ Կենտրոնական վիճակագրական վարչության հաղորդագրությունը ՍՍՌՄ 1946-1950 թվականների չորրորդ (հետպատերազմյան առաջին) հնգամյա պլանի կատարման արդյունքների մասին, «Սովետական Հայաստան» № 90, 1951 թ.։

դրանքը 1950 թվին՝ 1940 թվի համեմատությամբ աճեց 2,3 անգամ, ոստ որում պլանային առաջադրանքը գերակատարվեց 17 տոկոսով»։[1]

Մեքենաշինական գործարաններում լայնորեն կիրառվում են արտադրության առավել ռացիոնալ մեթոդները՝ հոսքային ավտոմատ գծերը, ավտոմատներով ու կիսաավտոմատներով կատարվող զոդումը, մետաղների արագ մշակման մեթոդները և այլն։

Ծանր ինդուստրիայի ճյուղերի զարգացմանը զուգընթաց, հետպատերազմյան հնգամյակում բուռն տեմպերով աճեցին նաև թեթև արդյունաբերության բոլոր ճյուղերը, որոնք անմիջականորեն արտադրում են լայն սպառման ապրանքներ։

Հնգամյակի ընթացքում թեթև արդյունաբերությունը հիմնական ապրանքատեսակների գծով մեծացավ հետևյալ չափերով.— բամբակեղեն գործվածքների արտադրանքը՝ 2,4 անգամ, բրդյա գործվածքներինը՝ 2,9 անգամ, կաշվե կոշկեղենինը՝ 3,2 անգամ, ռեզինե կոշկեղենինը՝ 7 անգամ։ Այսպիսով, հնգամյա պլանի կատարման շնորհիվ, Սովետական Միության արդյունաբերության բոլոր ճյուղերը աճեցին բուռն տեմպերով։

Անշեղորեն աճեց և զարգացավ նաև մեր երկրի գյուղատնտեսությունը։ Գյուղատնտեսական արտադրանքի գծով՝ նախապատերազմյան մակարդակը զգալի չափերով գերակատարված է։

Հացահատիկի համախառն բերքը 1950 թվին 1940 թվի մակարդակը գերազանցեց 345 միլիոն փթով, ըստ որում ցորենի արտադրանքի աճը կազմեց 376 միլիոն փութ։

Հացահատիկային կուլտուրաների բերքատվությունը հնգամյակի ընթացքում բարձրացավ 13 տոկոսով։ Նախապատերազմյան մակարդակի համեմատությամբ զգալիորեն աճեց նաև տեխնիկական կուլտուրաների բերքատվությունը, ինչպես նաև նրանց համախառն բերքը։ Մեծ չափերով ավելացավ գյուղատնտեսության տեխնիկական սպառազինությունը։ Այդ առթիվ կառավարական հաղորդագրության մեջ ասված է. «Տրակտորների թողարկումը 1950 թվին՝ 1940 թվի համեմատությամբ աճել է 3,8 անգամ, կոմբայններինը՝ 3,6 անգամ, տրակտորաքարշ գութաններինը՝ 3,1 անգամ, տրակտորաքարշ շարքացաններինը՝ 5,5 անգամ, տրակտորաքարշ կուլտիվատորներինը՝ 3,1 անգամ»։[2]

Տնտեսական այն մեծ վերելքը, որ կատարվեց մեր երկրում հետպատերազմյան հնգամյակի ընթացքում, արմատապես բարելավեց աշխատավորների նյութական դրությունը։ Աշխատավորների նյութական և կուլտուրական մակարդակի անշեղ վերելքը հանդիսանում է սոցիալիզմի անխախտ օրենքը։

Ժողովրդի բարեկեցության ամենակարևոր ցուցանիշը ազգային եկամտի աճն է։ Հնգամյակի ընթացքում գերակատարվեց նաև ազգային եկամտի աճի պլանային առաջադրանքը. պլանով նախատեսված 38 տոկոսի փոխարեն՝ Սովետական Միության ազգային եկամուտը 1950 թվին՝ 1940 թվի համեմատությամբ աճեց 64 տոկոսով։

---

[1] Տես ՍՍՌՄ Գլխավոր պլանային հանձնաժողովի և ՍՍՌՄ Կենտրոնական վիճակագրական վարչության հաղորդագրությունը ՍՍՌՄ 1946—1950 թվականների չորրորդ (հետպատերազմյան առաջին) հնգամյա պլանի կատարման արդյունքների մասին. «Սովետական Հայաստան» № 90, 1951 թ.։

[2] Հնգամյակի կատարման վերաբերյալ այս և հետագա բոլոր տվյալները վերցված են ՍՍՌՄ Գլխավոր պլանային կոմիտեի և ՍՍՌՄ Կենտրոնական վիճակագրական վարչության հաղորդագրություններից։

1950 թվին ազգային եկամտի 74 տոկոսը ստացան Սովետական Միության աշխատավորները, իսկ նրա 26 տոկոսը մնաց պետության, կոլխոզների և կոոպերատիվ կազմակերպությունների տրամադրության տակ ու ծախսվեց սոցիալիստական արտադրության ընդլայնման և համապետական ու համաժողովրդական այլ կարիքների համար։

Չնայած տեխնիկայի անընդհատ աճին ու զարգացմանը և արտադրական պրոցեսների մեքենայացմանը, Սովետական Միությունում հնգամյակից-հընդամյակ անընդհատ աճում է բանվորների ու ծառայողների թիվը։ 1950 թվի վերջին ՍՍՌՄ բանվորների ու ծառայողների թիվը կազմում էր 39,2 միլիոն մարդ, որը նախապատերազմյան շրջանի համեմատությամբ 7,700 հազարով ավելի է։ Դրա հետ մեկտեղ աճեց նաև աշխատավորների եկամուտը. 1950 թվին այդ աճը, 1940 թվի համեմատությամբ, կազմեց 62 տոկոս։

Մեծ չափով ավելացան աշխատավորների նյութական և կուլտուրական մակարդակի բարձրացման համար պետության կողմից ծախսվող գումարները։ 1950 թվին այդ նպատակով (զանազան կենսաթոշակներ, մանկական հիմնարկներ, սանատորիաների ու հանգստյան տների ուղեգրեր, ուսման վրա կատարվող ծախսեր, ուսանողական թոշակներ և այլն) սովետական պետությունը ծախսել է 120 միլիարդ ռուբլի։

Աշխատավորների նյութական դրության բարելավմանը զուգընթաց, հետպատերազմյան հնգամյակի ընթացքում զգալիորեն բարձրացավ սովետական ժողովրդի կուլտուրական մակարդակը, ավելացավ բոլոր տեսակի ուսումնական հիմնարկներում սովորողների թիվը։ Տարրական, յոթնամյա ու միջնակարգ դպրոցներում, տեխնիկումներում և ԲՈՒՀ-երում սովորողների թիվը ավելացավ 8 միլիոնով և 1950 թվին հասավ 37 միլիոնի։ ԲՈՒՀ-երում 1950 թվին սովորում էր 1.247 հազար ուսանող՝ 1940 թվի 812 հազարի դիմաց։[1]

Հետպատերազմյան հնգամյակի ընթացքում հաջողությամբ իրականացվում էր ընկեր Ստալինի ցուցումը՝ գիտության ասպարեզում հասնել և առաջ անցնել կապիտալիստական երկրներից։ «1950 թվին գիտա-հետազոտական հիմնարկների ցանցը 1,5 անգամ գերազանցեց նախապատերազմյան մակարդակը, իսկ այդ հիմնարկների գիտական աշխատողների թիվը, նախապատերազմյան թվի համեմատությամբ, աճեց համարյա կրկնակի չափով։ Անցած հնգամյակի ընթացքում մեր երկրում խոշորագույն հայտնագործություններ ու գյուտեր կատարվեցին՝ գիտության ու տեխնիկայի տարբեր բնագավառներում»։[2]

Բարելավվեց նաև ազգաբնակչության նյութական սպասարկումը, լայնորեն ծավալվեց կոմունալ շինարարությունը. այդ նպատակով պետությունը հսկայական գումարներ ծախսեց։ Ապրանքների գների սիստեմատիկ իջեցման շնորհիվ հետպատերազմյան հնգամյակում էլ ավելի ընդարձակվեց ու զարգացավ սովետական առևտուրը։ Այս բոլոր միջոցառումների շնորհիվ աշխատավորների դրությունը արմատապես լավացավ։ Հնգամյակի ընթացքում քաղաքներում և բանվորական ավաններում վերականգնված ու նոր կառուցված բնակարանների ընդհանուր տարածությունը կազմում է ավելի քան 100 միլիոն

---

[1] ՏԵՍ „Большевик" 1951 թ., № 8։
[2] Նույն տեղում։

քառակուսի մետր։ Այդ նույն ժամանակամիջոցում գյուղական վայրերում վերականգնված ու կառուցված է 2,7 միլիոն բնակելի տուն։

Հետպատերազմյան հնգամյակի կատարման ու գերակատարման գործում վճռական դեր կատարեցին սաստիանովական շարժումն ու սոցիալիստական մրցությունը։

Հնգամյա պլանը ժամկետից շուտ կատարելու համար ծավալված սոցիալիստական մրցությանը մասնակցում էր մեր երկրի ժողովրդական տնտեսության մեջ զբաղված բանվորների ու ծառայողների 90 տոկոսը։ Արդյունաբերության մի շարք ճյուղերում բանվորների կեսից ավելին ստախանովականներ են, արտադրության նորարարներ։

Ստախանովականները պայքարում էին հանուն որակական ցուցանիշների, հանուն արտադրության տեխնոլոգիական պրոցեսի բարելավման, ավելի բարձր որակի ապրանքների թողարկման, հումքի, վառելիքի ու էլեկտրաէներգիայի խնայողության, հանուն սոցիալիստական արտադրության հիմնական միջոցների ռացիոնալ օգտագործման, շրջանառու միջոցների շրջանառության արագացման, ինքնարժեքի իջեցման, աշխատանքի արտադրողականության բարձրացման։

Հետպատերազմյան հնգամյակում ստախանովյան շարժման համար բնորոշ էր նաև արտադրության նորարարների փորձի լայն ընդհանրացումը և գիտության կապը պրակտիկայի հետ։ Նորարարությունը հետպատերազմյան հնգամյակում դարձավ մասսայական երևույթ։

«Հնգամյա պլանի հիմնական խնդիրներն էին՝ վերականգնել երկրի տուժած շրջանները, վերականգնել արդյունաբերության ու գյուղատնտեսության նախապատերազմյան մակարդակը և այնուհետև նշանակալից չափերով գերազանցել այդ մակարդակը։ Մեր մեծ Հայրենիքի նկատմամբ հպարտության զգացումով մենք կարող ենք այսօր ասել, որ հնգամյակի այդ խնդիրները հաջողությամբ կատարվել են»[1]։

Հետպատերազմյան հնգամյակի հաջող կատարումը լայն հնարավորություններ ստեղծեց մեր երկրի տնտեսության հետագա հզորացման համար։ Ընկեր Ստալինի առաջարկով ՍՍՌՄ-ի կառավարությունը ընդունեց մի շարք որոշումներ՝ կոմունիզմի մեծ կառուցումների մասին, կառուցումներ, որոնց շնորհիվ Վոլգա, Դոն, Դնեպր և Ամու-Դարյա գետերի էներգետիկ հսկայական հնարավորությունները ի սպաս են դրվելու երկրի հետագա վերելքին, նյութական, տեխնիկական բազա են ստեղծելու կոմունիզմի կառուցման համար։

Այդ հոյակապ կառուցումներին մասնակցում են ՍՍՌՄ-ի բոլոր ռեսպուբլիկաները ու մարզերը։ Ամբողջ սովետական ժողովուրդը ոգևորված կոմունիզմի մեծ կառուցումների փայլուն հեռանկարով, օժանդակում է, որպեսզի ժամանակին և բարձր որակով ավարտվեն ՍՍՌՄ-ի տնտեսության համար վճռական նշանակություն ունեցող այդ կառուցումները։

Նոր հնգամյակում բուռն տեմպերով աճեց նաև Սովետական Հայաստանի էկոնոմիկան, որը հանդիսանում է ՍՍՌՄ-ի էկոնոմիկայի անբաժանելի մասը։ Այն օրինաչափությունները, որոնցով զարգանում է Սովետական Միության տնտեսությունը, բնորոշ են նաև ազգային ռեսպուբլիկաների համար, այդ

[1] Տես «Սովետական Հայաստան». 7 նոյեմբերի 1950 թ. ընկ. Բուլգանինի զեկուցումը Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխության 33-րդ տարեդարձին նվիրված նիստում։

թվում նաև մեր ռեսպուբլիկայի։ Հայկական ՍՍՌ էկոնոմիկան— նրա արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, տրանսպորտը, առևտուրը, շինարարությունը և այլն,— ինչպես նախապատերազմյան հնգամյակներում, այնպես էլ հետպատերազմյան հնգամյակում, զարգանում էին ընդլայնված վերարտադրության օրենքներով, որը ապահովում է ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի արտադրության անընդհատ աճը։

Լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության անշեղ իրականացման շնորհիվ, դեռևս նախապատերազմյան հնգամյակների ընթացքում Սովետական Հայաստանը, զարգանալով սոցիալիստական ազգերի մեծ ընտանիքում, ցարական Ռուսաստանի հետամնաց գաղութային ծայր երկրից վերածվեց արդյունաբերական ծաղկող ռեսպուբլիկայի։

1940 թվին արդյունաբերության համախառն արտադրանքը 1913 թվի համեմատությամբ աճեց 21 անգամ, էլեկտրաէներգիայի արտադրանքը 1913 թ. 5,1 միլիոն կիլովատ-ժամից 1940 թվին հասավ 395[1] միլիոն կիլովատ-ժամի, արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռը ամբողջ ժողովրդական տնտեսության համախառն արտադրանքի մեջ 1913 թվի 23,3 տոկոսի դիմաց 1940 թվին կազմեց 84 տոկոս։

Նախապատերազմյան հնգամյակների ընթացքում Հայկական ՍՍՌ-ում ստեղծվեցին արդյունաբերության բոլորովին նոր ճյուղեր— էլեկտրաարդյունաբերություն, քիմիական արդյունաբերություն, շինարարական արդյունաբերություն, տեքստիլ արդյունաբերություն և թեթև արդյունաբերության մի շարք ճյուղեր։

Դրա հետ մեկտեղ, տեխնիկական նոր բազայի վրա արմատապես վերակառուցվեցին արդյունաբերության հին ճյուղերը գունավոր մետաղաձուլությունը, սննդի ու համի արդյունաբերությունը և այլն։

Նախապատերազմյան հնգամյակների տարիներին Հայաստանի բոլշևիկները, իրագործելով լենինյան-ստալինյան կոոպերատիվ պլանը, ռեսպուբլիկայում ստեղծեցին առաջավոր սոցիալիստական գյուղատնտեսություն, որը սպառազինված է աշխարհում ամենաառաջավոր տեխնիկայով։ Վերջինիս շնորհիվ պայմաններ ստեղծվեցին ռեսպուբլիկայի գյուղատնտեսության մեջ առաջավոր միչուրինյան ագրոբիոլոգիայի կիրառման համար։

Տնտեսական այս հաջողությունների հիման վրա արմատապես բարելավվեցին ռեսպուբլիկայի աշխատավորության նյութական-կուլտուրական կյանքի պայմանները։

Հայրենական Մեծ պատերազմի ընթացքում ռեսպուբլիկայի էկոնոմիկան, կատարելով ռազմաճակատի պատվերները, շարունակում էր զարգանալ։

Այդ տարիներին կառուցվեցին ու գործարկվեցին մի շարք արդյունաբերական խոշոր ձեռնարկություններ, որոնք դարձան ռեսպուբլիկայի մեքենաշինության հիմքը։ Դրանց թվին են պատկանում էլեկտրամեքենաշինական գործարանը, կոմպրեսորների և ժամացույցի գործարանները։ Այդ նույն ժամանակամիջոցում սկսվեց Հոկտեմբերյանի Կոնսերվի գործարանի, Ալավերդու Քիմիական գործարանի և այլ ձեռնարկությունների կառուցումը։

Հետպատերազմյան հնգամյակի պատմական խնդիրները, որ առաջադրեց ընկեր Ստալինը՝ 1946 թվի փետրվարի 9-ի իր նախընտրական ճառում, հաջո-

[1] Տես Հայկական ՍՍՌ 1946—1950 թ.թ. հետպատերազմյան հնգամյա պլանը։

ղությամբ կատարվում են նաև մեր ռեսպուբլիկայում, շնորհիվ միութենական կառավարության և անձամբ ընկեր Ստալինի սիստեմատիկ օգնության։

Հնգամյակի առաջին տարում, 1946 թվին, հաջողությամբ ավարտվեց ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության վերակառուցումը՝ խաղաղ շինարարության պահանջների համեմատ և ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման նպատակներով։

Այդ տարիներին Սովետական Հայաստանում կառուցվել ու վերակառուցվել է ավելի քան 50 խոշոր արդյունաբերական ձեռնարկություն։

Դրա շնորհիվ Հայկական ՍՍՌ արդյունաբերության ստրուկտուրայի մեջ կատարվեցին զգալի փոփոխություններ։

Ինչպես արդյունաբերության 1-ին ստորաբաժանման ճյուղերի արագ զարգացմանը, նախապատերազմյան հնգամյակների ընթացքում ռեսպուբլիկայում դեռևս չկար լուրջ մեքենաշինարարություն։ Հետպատերազմյան հնգամյակում ստեղծվեց մեքենաշինական արդյունաբերություն, որի արտադրանքը ոչ միայն լիովին բավարարում է մեր ռեսպուբլիկայի պահանջները, այլև զգալի չափերով ուղարկվում է նրա սահմաններից դուրս։

Սովետական Հայաստանում այժմ կան մեքենաշինության հետևյալ ճյուղերը. էլեկտրամեքենաշինություն, դազգահաշինություն, գյուղատնտեսական մեքենաշինություն և այլն։

Հայկական ՍՍՌ մեքենաշինությունը, որ Համամիութենական նշանակություն ունի, ներկայումս հաջողությամբ կատարում է կոմունիզմի մեծ կառուցումների պատվերները։

Մեքենաշինության համախառն արտադրանքը, նախապատերազմյան ժամանակաշրջանի համեմատությամբ աճել է մոտ 10 անգամ։ Մեքենաշինության զարգացման բարձր տեմպերի մասին ՀԿ(բ)Պ 15-րդ համագումարում տված իր զեկուցման մեջ ընկ. Տր. Հարությունյանը ասաց. «Հաշվետու ժամանակաշրջանում հաջողությամբ է կատարվել Հայաստանի Կ(բ)Պ 14-րդ համագումարի ցուցումը՝ մեքենաշինությունն ամեն կերպ զարգացնելու մասին։ Արտադրության 1950 թվականի պլանը կատարված է 109,5 տոկոսով, ըստ որում համախառն արտադրանքի թողարկումը 1948 թվականի համեմատությամբ ավելացել է ավելի քան երեք անգամ»։[1]

Մեքենաշինության հետ մեկտեղ, հետպատերազմյան հնգամյակում արագ տեմպերով աճեցին նաև 1-ին ստորաբաժանման մյուս ճյուղերը— էլեկտրաարդյունաբերությունը, գունավոր մետաղաձուլությունը, քիմիական արդյունաբերությունը, շինարարական արդյունաբերությունը և այլն։

Հետպատերազմյան հնգամյակում կատարված ստրուկտուրային փոփոխությունների թվին է պատկանում արդյունաբերության նոր ճյուղերի ստեղծումը (գունավոր մետաղաձուլության նոր տեսակներ, բրդյա գործվածքների արտադրություն, շաքարի արդյունաբերություն և այլն)։

Ծանր ինդուստրիայի ճյուղերի վերականգնման և զարգացման անհրաժեշտության մասին՝ Հայկական ՍՍՌ-ի հետպատերազմյան հնգամյակի վերաբերյալ օրենքում ասված էր. «Ապահովել ծանր արդյունաբերության առաջնահերթ զարգացումը, հատկապես հիդրոէլեկտրաէներգիայի արտադրության,

[1] Տր. Հարությունյան. Հաշվետու զեկուցում Հայաստանի Կ(բ)Պ 15-րդ համագումարում ՀԿ(բ)Պ Կենտրոնական կոմիտեի աշխատանքի մասին. Հայպետհրատ. 1951 թ., էջ 22։

քիմիական արդյունաբերության, գունավոր մետաղաձուլության, մետաղամշակման արդյունաբերության և շինանյութերի արդյունաբերության գծով։[1]

Այս առաջադրանքը կատարված է։ Վերևում հիշատակված արդյունաբերական ճյուղերի պլանները կատարվել են ու գերակատարվել։ Ռեսպուբլիկայի պարտիական և տնտեսական կազմակերպությունները հատուկ ուշադրություն են դարձրել էլեկտրաէներգիայի արտադրության և էլեկտրակայանների հզորության հետագա մեծացման վրա։ Քանի որ Հայաստանում առ այժմ չկան էներգետիկ ռեսուրսների ուրիշ լուրջ աղբյուրներ, ռեսպուբլիկայի ինդուստրացման տեմպերի արագացման համար հիդրոէլեկտրաէներգիան վճռական նշանակություն ունի։

Հետպատերազմյան հնգամյակի ընթացքում հայ ժողովուրդը, ՀԿ(բ)Պ Կենտկոմի ղեկավարությամբ իրականացնելով ընկեր Ստալինի ցուցումները՝ Ռեսպուբլիկայի արտադրողական ուժերի հետագա զարգացման անհրաժեշտության մասին, խոշոր նվաճումների հասավ էլեկտրիֆիկացիայի ասպարեզում։

Այս պրոբլեմի լուծումը հետպատերազմյան հնգամյակում ընթացել է երկու ճանապարհով. գոյություն ունեցող էլեկտրակայանների վերակառուցման և վերասարքավորման միջոցով և նոր էլեկտրակայանների կառուցման միջոցով։ Դրա շնորհիվ հետպատերազմյան հնգամյակի տարիներին Սովետական Հայաստանում ավելացավ ինչպես էլեկտրակայանների հզորությունը, այնպես էլ նրանց արտադրած էլեկտրաէներգիայի քանակը։ «Գործող հիդրոէլեկտրակայանների կարողությունն ավելացնելու, ինչպես նաև Սևանի հիդրոէլեկտրակայանը գործարկվելու շնորհիվ էլեկտրաէներգիայի արտադրությունը 1950 թվականին համեմատած նախապատերազմյան մակարդակի հետ ավելացավ 2,4 անգամ և գերազանցեց հնգամյա պլանի առաջադրանքը։ Մեծ աշխատանքներ են կատարվել Գյումուշի խոշոր հիդրոէլեկտրակայանի շինարարության գծով՝ ռեսպուբլիկայի էներգետիկ բազան էլ ավելի ընդարձակելու համար։[2]

1948 թ. ավարտվեց Սևանի հիդրոտեխնիկական խոշոր կառուցումը, որը համամիութենական նշանակություն ունի։ 1949 թվի հուլիսին Սևանգեսի շինարարները ավարտեցին ու գործող էլեկտրակայանների շարքը մտցրին Սևանի լճային հիդրոէլեկտրակայանը։

Մեծ չափերով ավելացավ նաև Հայկական ՍՍՌ գունավոր մետաղաձուլությունը, որ հանդիսանում է ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության առաջատար ճյուղերից մեկը։ Սովետական իշխանության տարիներին Հայաստանի գունավոր մետաղաձուլությունը արմատապես վերակառուցվեց և ներկայումս հենվում է առաջավոր տեխնիկայի վրա, ունենալով զարգացման ընդարձակ հեռանկարներ։ Պղնձահանքի հանույթը Ալավերդում և Շամլուղում հնգամյակի 4 տարիների ընթացքում աճեց մոտ 50 տոկոսով, իսկ պղնձի ձուլումը Ալավերդում նույն ժամանակամիջոցում աճեց 40 տոկոսով։ Ղափանի

---

[1] Օրենք Հայկական ՍՍՌ ժողովրդական անտեսության վերականգնման ու զարգացման 1946–1950 թթ. հնգամյա պլանի մասին։

[2] Հայկական ՍՍՌ Պետական պլանային հանձնաժողովի և վիճակագրական վարչության հաղորդագրությունը Հայկական ՍՍՌ 1946–1950 թվականների 4-րդ (հետպատերազմյան առաջին) հնգամյա պլանի կատարման արդյունքների մասին։ «Սովետական Հայաստան» № 136, 1951 թ.։

և Շամլուղի մետալուրգները գերակատարեցին պղնձահանքի հանույթի պետական պլանները, բարելավվեց նաև Ալավերդու պղնձաձուլական գործարանի աշխատանքը։

1950 թվին մետաղաձուլական արդյունաբերության արտադրանքը 1948 թվի համեմատությամբ աճեց 80 տոկոսով։[1] Այս նշանակում է, որ գունավոր մետաղաձուլության արտադրանքի տարեկան միջին աճը կազմեց 40 տոկոս, որը զգալիորեն գերազանցում է ամբողջ արդյունաբերության զարգացման աճի տեմպը։

Գնահատելով Հայաստանի մետալուրգների աշխատանքը, ընկ. Հարությունյանը ՀԿ(բ)Պ 15-րդ համագումարում ասաց. «Ղափանի հանքվարչությունը գերակատարեց կառավարության հատուկ որոշմամբ 1950 թվականի համար սահմանված պլանը, հանքաքարի հանույթը գերազանցելով 12 տոկոսով։ Շամլուղի հանքերը նույնպես կատարեցին կառավարության առաջադրանքը և գերակատարեցին հանքաքարի հանույթի 1950 թվականի պլանը։ Իր աշխատանքը բարելավեց նաև Ալավերդու Պղնձաձուլական գործարանը՝ 1950 թվականի պլանը կատարելով 109 տոկոսով, այդ թվում նաև էլեկտրոլիտային պղնձի պլանը»։[2]

Հետպատերազմյան հնգամյակում արագ տեմպերով զարգացան նաև ծանր ինդուստրիայի մյուս ճյուղերը՝ քիմիական արդյունաբերությունը, շինանյութերի արդյունաբերությունը և այլն։ Այսպես, օրինակ՝ քիմիական արդյունաբերության համախառն արտադրանքը նախապատերազմյան ժամանակաշրջանի (1940 թ.) համեմատությամբ աճեց 5 անգամ, իսկ շինանյութերի արդյունաբերությունը՝ 3,4 անգամ։[3]

Նույնպիսի բուռն տեմպերով հետպատերազմյան հնգամյակում զարգանում էին նաև 2-րդ ստորաբաժանման արդյունաբերական ճյուղերը՝ սննդիհամի արդյունաբերությունը, տեքստիլ արդյունաբերությունը, թեթև ինդուստրիան և այլն։

Ընկեր Ստալինը առաջադրեց, որ հետպատերազմյան հնգամյակում ծանր ինդուստրիայի վերականգնման և զարգացման հետ մեկտեղ հարկավոր է վերականգնել ու ծավալել նաև թեթև ինդուստրիայի ճյուղերը։ Առաջնորդի այս ցուցումը իրականացվում էր ինչպես ամբողջ Սովետական Միությունում, նույնպես և Հայկական ՍՍՌ-ում։ Այսպես, օրինակ՝ բամբակեղեն գործվածքների արտադրությունը 1950 թվին՝ 1940 թվի համեմատությամբ աճեց 1,3 անգամ, մետաքսե գործվածքներինը՝ 6,9 անգամ, տրիկոտաժինը՝ 2,4 անգամ, գուլպաներինը՝ 1,5 անգամ և այլն։

Հայկական ՍՍՌ տեղական արդյունաբերությունը և արհեստագործական կոոպերացիան գերակատարեցին հնգամյակի առաջադրանքները 18 տոկոսով։ 1950 թվին՝ 1940 թվի համեմատությամբ թիթեղյա ամանեղենի թողարկումը ավելացավ 5 անգամ, մահճակալներինը՝ 2,9 անգամ, սպիտակեղենի տրիկոտաժինը՝ 1,3 անգամ, գուլպաներինը՝ 1,9 անգամ, բամբակյա գործվածքներինը՝ 2,9 անգամ, կոշկեղենինը՝ 1,8 անգամ։[4]

---

[1] Տես ընկ. Գ. Հարությունյանի զեկուցումը ՀԿ(բ)Պ 15-րդ համագումարում, էջ 17։

[2] Նույն տեղում։

[3] Հայկական ՍՍՌ 1946—1950 թվականների չորրորդ (հետպատերազմյան առաջին) հնգամյա պլանների կատարման տվյալները վերցված են ամենուրեք Հայկական ՍՍՌ պլանային հանձնաժողովի և վիճակագրական վարչության հաղորդագրությունից։

[4] Տես Հայկական ՍՍՌ Գլխավոր պլանի և վիճակագրական վարչության հաղորդումը։

Այսպիսով՝ վերելք ապրեցին ու աճեցին Հայկական ՍՍՌ արդյունաբերության բոլոր ճյուղերը։

Զեռք բերված նվաճումների հիման վրա՝ ՀԿ(բ)Պ 15-րդ համագումարը որոշեց Հայկական ՍՍՌ արդյունաբերության հետագա զարգացման հեռանկարները։ Ռեսպուբլիկայի էկոնոմիկայի հետագա զարգացման մասին ՀԿ(բ)Պ 15-րդ համագումարի դիրեկտիվների հիմքում ընկած է Ստալինյան իդեան՝ ստեղծել կոմունիզմի նյութական-տեխնիկական բազան։

Այս պրոբլեմի լուծումը կապահովի մեր երկրի ինդուստրացման մակարդակի հետագա բարձրացումը։ Ինդուստրացման բարձր տեմպերը էլ ավելի մեծ նշանակություն են ստանում սոցիալիզմից աստիճանաբար կոմունիզմին անցնելու ժամանակաշրջանում։ Ահա թե ինչու ՀԿ(բ)Պ 15-րդ համագումարը հանձնարարեց ՀԿ(բ)Պ կենտկոմին և ռեսպուբլիկայի կառավարությանը՝ շարունակել ավելի ևս զարգացնել Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսության առաջատար ճյուղերը։

Այս առթիվ համագումարի ընդունած բանաձևի մեջ ասված է. «Հաշվի առնելով ռեսպուբլիկայի հարաճուն պահանջն էներգետիկ բավարար բազայով ապահովելու բացառիկ կարևորությունը, համագումարը պարտիական կազմակերպությունների կարևորագույն խնդիրն է համարում՝ Գյումուշի հիդրոէլեկտրակայանի շահագործման հանձնելը ավելի կարճ ժամկետում և, կառավարության որոշմանը համապատասխան, նախագծա-հետախուզական ու շինարարական աշխատանքների ծավալումը Արզնիի, Քարվանսարայի, Այրումի հիդրոէլեկտրակայանների և Օխչի գետի էլեկտրակայանի գծով»։[1]

Համագումարի այս դիրեկտիվների կատարման համար ռեսպուբլիկայի պարտիական և սովետական կազմակերպությունները անց են կացնում հասապատասխան միջոցառումներ, որպեսզի շուտով սկսվի Արզնիգէսի շինարարությունը, այն հաշվով, որ այդ հիդրոկայանը լրիվ կարողությամբ գործարկվի մոտ ապագայում։ Քարվանսարայի հիդրոկայանի շինարարությունը նախատեսվում է հաջորդ հնգամյակում։

Այս էլեկտրակայաններից բացի, ռեսպուբլիկական կազմակերպությունները մշակել են միջին կարողության մի շարք հիդրոկայանների կառուցման պլանները։

Զարգացման մեծ հեռանկարներ ունի ռեսպուբլիկայի գունավոր մետալագործությունը, քանի որ սովետական իշխանության տարիներին կատարված ընդարձակ երկրաբանական—հետախուզական աշխատանքների շնորհիվ հայտնաբերված տարբեր տեսակի գունավոր մետաղների խոշոր պաշարները բարենպաստ նախադրյալներ են ստեղծում արդյունաբերության այս ճյուղի հետագա ընդարձակման ու ծավալման համար։

Հետախուզական աշխատանքներ կատարվեցին ինչպես Հայրենական պատերազմից առաջ, այնպես էլ պատերազմի տարիներին։ Սովետական Հայաստանի գիտնականները, Սովետական Միության խոշորագույն գիտնականների օգնությամբ սիստեմատիկ կերպով և հետևողականորեն հետախուզում էին մեր երկրի ընդերքը։ Գունավոր մետաղների նոր հանքավայրերի հայտնագործման համար Հայաստանի մի խումբ երկրաբաններ արժանացան բարձրագույն պարգևի՝ Ստալինյան մրցանակի։ Ռեսպուբլիկայի երկրաբանական հիմնարկներն ու գիտական-երկրաբանները վերջին 2 տարվա ընթաց-

[1] ՏԵՍ ՀԿ(բ)Պ 15-րդ համագումարի բանաձևը, Հայպետհրատ 1951, էջ 14։

քում ավելի մեծ աշխատանք ծավալեցին ռեսպուբլիկայի բնական հարստությունների ուսումնասիրման գործում։

Այս առթիվ ընկ. Հարությունյանը ՀԿ(բ)Պ 15-րդ համագումարում տված իր զեկուցման մեջ ասաց. «Երկրաբանական-հետախուզական աշխատանքների ծավալը 1950 թվականին, 1948 թվականի համեմատությամբ, աճել է ավելի քան չորս անգամ։ Այդ նույն ժամանակամիջոցում հալելու համար պատրաստված պղնձի և այլ գունավոր մետաղների պաշարներն ավելացել են 2—2 և կես անգամ»։[1]

Նկատի ունենալով այս հանգամանքը, Հայաստանի բոլշևիկների 15-րդ համագումարը առաջարկեց ՀԿ(բ)Պ Կենտկոմին՝ միջոցներ ձեռք առնել եղած հնարավորությունները մաքսիմալ չափերով օգտագործելու համար, ռեսպուբլիկայի գունավոր մետալուրգիայի նոր, հզոր զարգացման համար։ Համագումարի ընդունած բանաձևի մեջ ասված է. «Հատուկ ուշադրություն նվիրել գունավոր մետալուրգիայի արդյունաբերության հետագա զարգացմանը»։

Հայաստանի կոմունիստական (բոլշևիկների) պարտիայի 15-րդ համագումարը կոնկրետ դիրեկտիվներ տվեց նաև արդյունաբերության մյուս ճյուղերի հետագա զարգացման մասին։ Քիմիական արդյունաբերությունը, շինանյութերի արդյունաբերությունը և թեթև ինդուստրիայի ճյուղերը հաջորդ հնգամյակում պետք է զգալի չափերով ավելացնեն արտադրանքի թողարկումը, որպեսզի կարողանան բավարարել ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության և բնակչության աճող պահանջները։

Արդյունաբերության հետ մեկտեղ, հետպատերազմյան հնգամյակում մեծ հաջողություններ ձեռք բերեց նաև մեր ռեսպուբլիկայի գյուղատնտեսությունը։ Գյուղատնտեսության պլանների կատարումն ու գերակատարումը բացատրվում է կոլխոզների հանրային տնտեսության ամրապնդումով, գյուղատնտեսության մեքենայացման մակարդակի բարձրացմամբ, գյուղատնտեսական մասնագետների թվի աճով և աշխատանքի նոր մեթոդների լայն կիրառմամբ։ Հայկական ՍՍՌ գյուղատնտեսության տեխնիկական սպառազինության մակարդակի բարձրացումը հետպատերազմյան հնգամյակում նախապատերազմյան ժամանակաշրջանի համեմատությամբ, երևում է հետևյալ թվերից, 1950 թվին ՄՏԿ-ների թիվը ռեսպուբլիկայում, 1932 թվի համեմատությամբ ավելացավ 6,6 անգամ, իսկ 1940 թվի համեմատությամբ՝ 1,5 անգամ։ Մեծացավ տրակտորների պարկը և տրակտորների միջին հզորությունը։ Դրա հետ մեկտեղ ավելացավ ՄՏԿ-ների աշխատանքի տեսակարար կշիռը՝ կոլխոզների բոլոր գյուղատնտեսական աշխատանքներում։ Այսպես, օրինակ՝ եթե 1932 թվին ՄՏԿ-ների կատարած աշխատանքը կոլխոզներում կազմում էր վերջիններիս բոլոր աշխատանքների 38,9 տոկոսը, ապա 1950 թվին նա կազմեց 89 տոկոս։ 1932 թվին ՄՏԿ-ները սպասարկում էին կոլխոզների ցանքատարածության միայն 36,4 տոկոսը, իսկ 1950 թվին՝ 93 տոկոսը։[2]

Գերակատարված է հնգամյակի առաջադրանքը հացահատիկային կուլտուրաների բերքատվության և համախառն բերքի մասին։ 1950 թվին նրանց բերքատվությունը 1940 թվի համեմատությամբ աճեց 53 տոկոսով։

---

[1] Գ. Հարությունյան, Հաշվետու զեկուցում ՀԿ(բ)Պ 15-րդ համագումարում. էջ 13—19։

[2] Տես Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր»-ը (հաս. գիտություններ), 1951 թ., № 3։

Ընդարձակվեց նաև տեխնիկական կուլտուրաների ցանքատարածությունը, բարձրացավ նրանց բերքատվությունը։ Հնգամյակի ընթացքում տեխնիկական կուլտուրաների ցանքատարածությունը ավելացավ 17 տոկոսով, այդ թվում բամբակինը՝ 26 տոկոսով, շաքարի ճակնդեղինը՝ 48 տոկոսով, ծխախոտինը՝ 29 տոկոսով։[1]

Հնգամյակի ընթացքում բամբակի հումքի համախառն բերքը աճեց 3,4 անգամ, ծխախոտինը՝ 2 անգամ, շաքարի ճակնդեղինը՝ 1,5 անգամ։[2] Նախապատերազմյան ժամանակաշրջանի համեմատությամբ զգալիորեն մեծացան գյուղատնտեսական մյուս կուլտուրաների ցանքատարածությունն ու բերքատվությունը։

Գերակատարվեց նաև հնգամյա պլանի առաջադրանքը՝ հանրային մթերատու անասնապահության գլխաքանակի աճի մասին։ Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը կոլխոզներում 1950 թվին նախապատերազմյան ժամանակաշրջանի համեմատությամբ աճեց 27 տոկոսով, ոչխարների ու այծերի գլխաքանակը՝ 72 տոկոսով, խոզերինը՝ 2,2 տոկոսով, թռչուններինը՝ 3 անգամ։

Գյուղատնտեսության հետագա զարգացման և գյուղի ու քաղաքի միջև գոյություն ունեցող տարբերության վերացման գործում մեծ նշանակություն ունի գյուղատնտեսության էլեկտրիֆիկացումը։ Սովետական Հայաստանում վերջին հնգամյակի ընթացքում զգալի հաջողություններ են ձեռք բերված նաև այդ ուղղությամբ։ Հինգ տարվա ընթացքում էլեկտրիֆիկացված կոլխոզների թիվը մեծացավ համարյա 3 անգամ։ Հնգամյակի վերջում էլեկտրիֆիկացված էր ռեսպուբլիկայի կոլխոզների 2/3-ը։[4]

Հայաստանի գյուղատնտեսության զարգացման հեռանկարները սերտորեն կապված են ռեսպուբլիկայի ոռոգման ցանցի պլանաչափ ընդարձակման հետ։ Ինչպես պատերազմից առաջ, այնպես էլ հետպատերազմյան հնգամյակի ընթացքում սովետական պետությունը հսկայական միջոցներ էր տրամադրում Արարատյան դաշտում կատարվող իրիգացիոն աշխատանքների համար։ Հնգամյակի տարիներին մեծ աշխատանք կատարվեց այդ ուղղությամբ։ Կառուցված և շահագործման են հանձնված Ստորին Զանգուի ջրանցքի առաջին հերթը, Կոտայքի ջրմուղ կայանը և այլն։ Ավարտված են Արփա լճի ջրամբարի կառուցման աշխատանքները, ընդարձակ աշխատանք է ծավալված Թալինի ջրանցքի շինարարության, ինչպես նաև Արարատյան դաշտի ու Արագածոտնի տափաստանի ճահճակալված հողերի շորացման ու յուրացման ուղղությամբ։

Հետպատերազմյան հնգամյակի կատարման շնորհիվ նախադրյալներ են ստեղծված մի շարք նոր, կարևոր խնդիրների կատարման համար, որոնք կանգնած են մեր ռեսպուբլիկայի գյուղատնտեսության առաջ։ ՍՍՌՄ Մինիստրների Սովետը ընկեր Ստալինի ցուցումով 1950 թվի մայիսի 30-ին քննեց Սովետական Հայաստանում ցորենի արտադրությունը մեծացնելու և սեփական ցորենով ռեսպուբլիկայի կարիքները բավարարելու անհրաժեշտության հարցը։ Այդ կարևոր խնդիրը պետք է կատարվի հաջորդ հնգամյակի ըն-

[1] Տես Հայկական ՍՍՌ Պետպլանի և վիճակագրական վարչության հաղորդումը։
[2] Նույն տեղում։
[3] Նույն տեղում։
[4] Նույն տեղում։

թացքում։ Նա հանդիսանում է մեր ռեսպուբլիկայի գյուղատնտեսության կենտրոնական պրոբլեմը։ Ընկեր Ստալինի այս ցուցումի իրականացման համար ՀԿ(բ)Պ 15-րդ համագումարը ռեսպուբլիկայի ղեկավար օրգաններին տվեց հետևյալ դիրեկտիվը։

«Համագումարը նշում է, որ գյուղատնտեսության հետագա զարգացման ասպարեզում ռեսպուբլիկայի պարտիական կազմակերպությունների գլխավոր խնդիրն է՝ պայքար մղել Միութենական կառավարության այն դիրեկտիվը կատարելու համար, որ պահանջում է ավելացնել ցորենի արտադրությունը, մինչև որ ամենամոտ տարիներս լիովին ապահովվի ռեսպուբլիկայի հացի պահանջը։ Դրա համար անհրաժեշտ է գործադրել այնպիսի միջոցառումներ, որոնք ապահովում են ցորենի ցանքատարածության ավելացումը, նրա բերքատվության կրկնապատկումը՝ ագրոտեխնիկական միջոցառումների կոմպլեքսի գործադրման, հանքային պարարտանյութերի կիրառման, գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման ծավալն ավելացնելու և հողագործության ընդհանուր կուլտուրան բարձրացնելու միջոցով»։[1]

Համագումարի այս դիրեկտիվի կատարման համար պետք է ավելացվի ոչ միայն հացահատիկային կուլտուրաների բերքատվությունը ռեսպուբլիկայում, այլև նրանց ու հատկապես ցորենի ցանքատարածությունը։

Նախատեսվում է, որ հացահատիկային կուլտուրաների ցանքատարածությունը 1950 թվի 280 հազար հեկտարի դիմաց 1957 թվին հասցվի 460 հազար հեկտարի, որից ցորենինը՝ 400 հազար հեկտար։ Ցորենի բերքատվությունը այդ թվին պետք է կազմի մեկ հեկտարից՝ 22—25 ցենտներ։[2]

ՀԿ(բ)Պ 15-րդ համագումարում տված իր զեկուցման մեջ ընկ. Հարությունյանը մանրամասնորեն տվեց այդ հոյակապ պլանի իրականացման պատկերը։ Մեր ռեսպուբլիկայում ստեղծված են այն բոլոր ռեալ հնարավորությունները, որ անհրաժեշտ են հացահատիկային կուլտուրաների ցանքատարածության ընդարձակման և նրանց բերքատվության բարձրացման համար։

Սակայն, հացահատիկի պրոբլեմի լուծմամբ չեն սպառվում Սովետական Հայաստանի գյուղատնտեսության առաջ կանգնած խնդիրները։ ՀԿ(բ)Պ 15-րդ համագումարի որոշման, ինչպես նաև ընկ. Հարությունյանի զեկուցման մեջ տրված են նաև այլ խնդիրներ, որոնց իրականացումը կհանգեցնի մեր ռեսպուբլիկայի գյուղատնտեսության հետագա բարգավաճմանը։

Անասնապահության հետագա քանակական ու որակական աճը, տեխնիկական կուլտուրաների բերքատվության բարձրացումը, խոիգացիոն աշխատանքների մեծ պլանի կատարումը և այս բոլորի հիման վրա աշխատանքի արտադրողականության բարձրացումը գյուղատնտեսության բոլոր ճյուղերում՝ կստեղծեն գյուղատնտեսական մթերքների առատություն, որը վճռական նշանակություն ունի սոցիալիզմից աստիճանաբար կոմունիզմին անցնելու գործում։

Հետպատերազմյան հնգամյակի տնտեսական պլանների հաջող կատարման ու գերակատարման շնորհիվ Սովետական Հայաստանում արմատապես

---

[1] ՀԿ(բ)Պ 15-րդ համագումարի բանաձևը, էջ 17—18։

[2] Տես Գ. Հարությունյան, Հաշվետու զեկուցում ՀԿ(բ)Պ 15-րդ համագումարում, էջ 32։

լավացավ ռեսպուբլիկայի աշխատավորների նյութական և կուլտուրական դրությունը։ Դրա լավագույն արտահայտությունը ամենից առաջ բանվորների ու ծառայողների թվի աճն է։ Եթե կապիտալիստական երկրներում տարեցտարի աճում է գործազրկությունը, ապա մեզ մոտ, ինչպես ողջ Սովետական Միությունում, այնպես էլ ազգային ռեսպուբլիկաներում ամեն տարի ավելանում է արտադրության մեջ զբաղված բանվորների ու ծառայողների թիվը։ Այսպես, օրինակ՝ մեր ռեսպուբլիկայում 1950 թվին բանվորների ու ծառայողների թիվը կազմում էր 235 հազար մարդ, որը 1940 թվի համեմատությամբ 90 հազարով ավելի է։

Լայն սպառման ապրանքների գների սիստեմատիկ իջեցման շնորհիվ բարձրացավ սովետական ռուբլու գնողունակությունը։ Դրանով իսկ մեծապես բարձրացավ ռեսպուբլիկայի բանվորների ու ծառայողների ռեալ աշխատավարձը։ «Հաշվետու տարիների ընթացքում,— ասաց ընկ. Հարությունյանը ՀԿ(բ)Պ 15-րդ համագումարում տված իր զեկուցման մեջ,— շարունակվում էր աշխատավարձի ֆոնդի անշեղ աճը։ Ինչպես հայտնի է, պարենամթերքի և արդյունաբերական ապրանքների գների իջեցման ուղղությամբ կառավարության կիրառած միջոցառումների հետևանքով բանվորների ու ծառայողների ռեալ աշխատավարձը խիստ կերպով բարձրացավ։ Դրա հետ միասին 1950 թվականին աշխատավարձի ֆոնդն աճեց՝ 1945 թվականի համեմատությամբ, 130,6 տոկոսով, այսինքն ավելի քան երկու անգամ, իսկ 1948 թվականի համեմատությամբ՝ 32,4 տոկոսով»։[1]

Բանվորների ու ծառայողների նյութական դրությունը լավացել է նաև այլ ուղղություններով։ Հետպատերազմյան հնգամյակի ընթացքում պետությունը հսկայական գումարներ բաց թողեց աշխատավորների կենցաղային ու կուլտուրական կարիքները բավարարելու համար (հատկացումներ սոցիալական ապահովության գծով, անվճար բուժ. օգնություն, անվճար ուսում, որակավորման բարձրացում պետության հաշվին, ամեն տարի տրվող արձակուրդներ՝ աշխատավարձի պահպանմամբ և այլն)։

Ռեսպուբլիկայի աշխատավորների նյութական դրության բարձրացմանը զգալիորեն նպաստեց լայն սպառման ապրանքների գների իջեցումը, որի հետևանքով խիստ կերպով լայնացավ սովետական առևտուրը։ 1950 թվին բնակչությանը վաճառվեց շատ ավելի ապրանք, քան նախապատերազմյան 1940 թվին։ Հետպատերազմյան հնգամյակի 2 տարվա ընթացքում, 1940 թվի համեմատությամբ վաճառվել է՝ մսեղեն— 65 տոկոսով ավելի, ճարպ՝ 97 տոկոսով, պանիր՝ 73 տոկոսով, շաքար՝ 50 տոկոսով, հրուշակեղեն՝ 96 տոկոսով, մակարոնեղեն՝ 20 տոկոսով։[1] 1950 թվին արդյունաբերական ապրանքների վաճառքը, 1940 թվի համեմատությամբ աճել է՝ բամբակյա գործվածքներինը՝ 40 տոկոսով, տրիկոտաժինը՝ 60 տոկոսով, կաշվե կոշկեղենինը՝ 23 տոկոսով, ռեզինե կոշկեղենինը՝ 109 տոկոսով, լվացքի օճառինը՝ 178 տոկոսով։

Հայաստանի աշխատավորների նյութական դրության լավացմանը զգալիորեն օժանդակել է նաև կոմունալ և բնակարանային ընդարձակ շինարա-

[1] Դր. Հարությունյան, Հաշվետու զեկուցում ՀԿ(բ)Պ 15-րդ համագումարում, էջ 13

թյունը ռեսպուբլիկայի քաղաքներում ու գյուղերում։ Պետական հիմնարկությունները ու ձեռնարկությունները և տեղական սովետները, ինչպես և քաղաքների ու բանվորական ավանների բնակիչները՝ պետական վարկի միջոցով կառուցել են 1 միլիոն 85 հազար քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող բնակելի տներ։ Բացի այդ, գյուղերում կառուցվել է 15 հազար բնակելի տուն։

Սովետական Հայաստանի աշխատավորության նյութական բարեկեցության սիստեմատիկ աճի հետ մեկտեղ, հետպատերազմյան հնգամյակում հաջողությամբ զարգանում էր հայ ժողովրդի ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրան։ Ժողովրդական կրթության բոլոր օղակներում սովորողների թիվը (բացառությամբ ԲՈՒՀ-երում սովորողների) հնգամյակի ընթացքում ավելացավ 50 հազարով և 1950 թվին կազմեց 312 հազար մարդ։ Ռեսպուբլիկայի բարձրագույն ուսումնական հաստատություններում 1950 թվին սովորում էր 15 հազար ուսանող՝ 1940 թվի 11 հազարի դիմաց։ Հայաստանի ժողովրդական տնտեսությունը հնգամյակի ընթացքում ստացավ բարձրագույն կրթություն ունեցող 6 հազար մասնագետ և հատուկ միջնակարգ կրթություն ունեցող 8 հազար մասնագետ։ Գիտահետազոտական հիմնարկների ցանցը Հայկական ՍՍՌ-ում 1950 թվին նախապատերազմյան ժամանակաշրջանի համեմատությամբ ընդարձակվել է 1,6 անգամ, իսկ այդ հիմնարկներում աշխատավորների թիվը ավելացավ 2,5 անգամ։

Հետպատերազմյան հնգամյակի ընթացքում հայ ժողովրդի ձեռք բերած հսկայական պատմական նվաճումները բացատրվում են ամենից առաջ մեծ Ստալինի և բոլշևիկների պարտիայի փառապանծ շտաբի՝ Համ(բ)Պ Կենտկոմի օգնությամբ և այն բանով, որ Հայաստանի կոմունիստական (բոլշևիկների) պարտիայի կենտրոնական կոմիտեն անշեղորեն իրականացնում էր մեծ առաջնորդի ցուցումները։

Հայ ժողովուրդը, ոգեշնչված սոցիալիզմի երկրի մեծ նվաճումներով, եղբայրական ժողովուրդների մեծ ընտանիքում վստահորեն ու հպարտ ընթանում է դեպի կոմունիզմի շողշողուն գագաթները։

---

[1] Տես Գ. Հարությունյան, Հաշվետու զեկույցում Հկ(բ)Պ 15-րդ համագումարում, էջ 73։